ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-2) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

--իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները
__աջակցում է համայնքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը
__աջակցում է համայնքում անասունների տոհմային, սերմնաբուծական և անասնաբուժական աշխատանքներին
__կազմակերպում է համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, մասնակցություն և օժանդակություն է ցուցաբերում դրանց շինարարության և վերանորոգման աշխատանքներին
__իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը
--իրականցնում է համայնքի ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները
--ապահովում է համայնքի հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում են.
_առնվազն միջնակարգ կրթություն
-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
-տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
Մրցույթը կկայանա 2018թվականի Սեպտեմբերի 24-ին ժամը 12.00-ին Երասխահունի համայնքապետարանի շենքում (հասցեն՝ գ . Երասխահուն փողոց N1 շենք N 9):
Մրցույթին մասնակցելու համար դիմող անձինք Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
1.Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
2.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի բնօրինակները պատճեների հետ միասին:
3.Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ 2011թվականի դեկտեմբերի 15-ի N1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
4.Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
5.Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:
6.Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքի փաստաթուղթ:
7.Անձնագրի պատճեն.
8.Սոցիալական քարտի պատճեն:
9.Ինքնակենսագրություն:
10.Մեկ լուսանկար 3x4 չափսի
Փաստաթղթերի պատճեները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար դիմել Երասխահունի համայնքապետարանի աշխատակազմ (հեռախոս 093-01-01-09) կամ Արմավիրի Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան-71, հեռախոս 0237-2-76-49)
Դիմումները ընդունվում են ամեն օր ժամը՝ 10.00-ից մինչև 16.00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի Սեպտեմբերի 5-ը:

ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
2018 թվականի օգոստոսի 22
գ. Երասխահուն